ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 մարտի 2021 թվականի N 143-Ա

2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 16-ԻՆ «ՏԱՐԱՀԱՆՄԱՆ, ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԵՎ ՈՐՈՆՈՂԱՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՈՒՍԱՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով, համաձայն Հայաստանի Հանրապետության ՀՀ Սյունիքի մարզպետի 2020 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2021 թվականի հիմնական միջոցառումների պլանը հաստատելու մասին» N307-Ա որոշմամբ հաստատված պլանի 5,5 կետի 5.5.1 ենթակետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության 2021 թվականի մարտի 17-ի N20/436 գրությունը՝

ո ր ո շ ո ւ մ ե մ.

1. 2021 թվականի ապրիլի 16-ին «Տարահանման, հրդեհաշիջման և որոնողափրկարարական աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը ՀՀ Սյունիքի մարզպետարանի վարչական շենքում» թեմայով անցկացնել ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն:
2. Ուսումնավարժության ղեկավար նշանակել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետ՝ փ/ծ գնդապետ Ա. Հարությունյանին:
3. Ուսումնավարժության ղեկավար Ա. Հարությունյանին՝ ապահովել նախապատրաստական աշխատանքների իրականացումը, փաստաթղթերի մշակումը և ծանուցումը ուսումնական վարժության մասնակիցներին:
4. Ուսումնավարժությունում ընդգրկել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչությանը, «Գազպրոմ Արմենիա» Սյունիքի ԳԳՄ վթարային բրիգադը, «Կապանի ԲԿ» շտապ օգնության ծառայության գծային բրիգադը,

Կապանի ոստիկանության բաժինը, ՃՈ 2-րդ սպայական գումարտակի 5-րդ վաշտի հաշվարկը:

5. Մարզպետարանի գլխավոր քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

31 03 2021

ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN MELIKSET 4108600096

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Մ. ՊՈՂՈՍՅԱՆ

2021թ. մարտի 31
ք. Կապան